Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մայրենիի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է
ներկայացնել դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), անձը հաստատող փաստաթուղթ,
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային
գրքույկի պատճենը (առկայության դեպքում), ինքնակենսագրություն (Ձև 5),
այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին ժամը 14 ^{00} –ին ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, փաստաթղթերն ընդունվում են 06.09.2023թ-ից 19.09.2023թ. հասցեն՝ ք. Գյումրի, Գարեգին Ա 6/16:

Տեղեկությունների համար զանգահարել (094)09-12-82 հեռախոսահամարով: